


ՎԻՇԱԳԱՄԱՐՏԸ ԵՎ ԱՌԱՋԻՆ ԶՈՂԻ ԳԱՂԱՓԱՐԸ

1. Աստվածաշնչի մեղսագործության միջնադարյան պատկերագրողականերում գայթակղիչ օժիդ համախաղատկերված է Եվայի դեմքով: Եվայի անունը հավանաբար սկիզբ է առնում արամեական, ,օժ,, բառից, սակայն կարելի է ենթադրել, որ Այարչի ձեռքը վարում է ոչ միայն ստուգաբանական մի շիդ, այլև այն համանի վիշաղների հետ կապված ավաղույթը, որը հենց հանգեցրել է Եվայի անվան:
2. Մեղսագործության ոյուծեն, ինչպես մեկ այլ տեղ փորձել ենք պարզաբանել /Լ. Արթուրյան, Ա. Դեմիրխանյան, 1982/, վերաբերվում է առաջին երկվորյակների վերակառուցված առապելին. երկսեռ երկվորյակները մեղանչում են արյունաղծությունը, որի հետևանքով մահանում են և իրենց մարմիններից որևէ բույս /կատարյալ դեպքում՝ տիեզերական ծառ/ է բուսնում /Ա. տարբերակ/, իսկ միասեռ երկվորյակները մեղամարտի են բռնվում, որը բերում է դրանցից մեկի /կամ երկուսի/ մահվան և իր մարմնից /կամ երկուսի մարմնից/ տիեզերական ծառ է աճում /Բ. տարբերակ/:
- 2.1. Զուգակցության և պայքարի սիմվոլիկ աշխոհները կառուցվածքով չափազանց նման են, վայելով երկու տարբերակների սերտ աղերսը: Եվան ու Աղամը զրկվում են անմահությունից /հմտ. երկվորյակների մահվան կամ կույս հարսնացուի սիմվոլիկ մահվան հետ/, բայց իրենցից է ծագում ողջ մարդկությունը /հմտ. Հեսուսի որովայնից աճող ծագումնաբանական ծառի, Աղամի զանգից աճող խաչի կամ էլ առանդամի բնախոսական սիմվոլիկայի հետ/:
3. Եվայի , ,վիշաղային,, հատկությունները և վերակառուցված առապելի երկու տարբերակի նույնությունը թույլ է տալիս նույն դասին վերագրելու նաև հրաշալիքալի հեքիաթների վիշաղամարտերը, որոնք բերում են վիշաղի մահ և արգասավորություն /ըրերի արձակում, սովի հաղթահարում/: Դասական վիշաղամարտի փաստորեն հաղորդակից է երեք անձ՝ հերոսը, վիշաղը և արքայադուստրը /բազմաթիվ գոհաբերված աղջիկները կատարում են հեքիաթների հատուկ դեր՝ շեշտել, ուծեղացնել հերոսուհու մուտքը/: Կարելի է ենթադրել, որ պայքարը զրնում է հենց աղջկա համար և հերոսը փաստորեն աղջկան ազատագրում



է իր համար, ինչպես սովորաբար նա գործում է նույն սյուժեի քսկըզբում, ազատագրելով վիշապի կանանց՝ իր եղբայրների և իր համար: Վերջինը հենց ցույց է տալիս, թե վիշապն ինչ ապաստանով է պահանջում քաղաքի աղջիկներին: ժիշտ է, ջրերն արժակելու դիվանդում հերոսը, որպես կանոն, չի ամուսնանում արքայադստեր հետ, սակայն ուրիշ դիվանդներում վիշապամարտը պակասում է հենց ամուսնությամբ՝ վիշապը կերպարանափոխվում է կախարդված գեղեցկուհու կամ հերոսի հակառակորդը պարտվելու պահին բացահայտում է իր կին լինելը /հմտ. աղջկա դրոշմը վիշապի արյամբ՝ հերոսի մեջքին, և կուսության վկայությունը՝ առաջատ մտնելուց հետո, հմտ. նաև հարց-պատասխանային մեամարտը հարսի ու փեսայի միջև և քնդհանրապես հարսի կերպարն իբրև օտար, թշնամի հարսանյաց ծեսին/:

3.1. Լույս աշխարհ համբռնալու համար հերոսը սպանում է մեկ ուրիշ վիշապի, այս անգամ՝ ծառի ստորոտում: Նրան լույս աշխարհ է դուրս բերում երախտապարտ թռչունը /կամ երկու թռչուն/: Սա նույնպես արտացոլում է վերակառուցվող առասպելը՝ վիշապի սպանությունը հանգեցնում է տիեզերական ծառի ամին /հմտ. հերոսի բարձրաձայն երգը աշխարհի միջով՝ իր սիմվոլիկ մահից հետո, կամ էլ տիեզերական ծառի դասական կերպարը՝ վիշապն արմատներում և երկու թռչունն զագաթին/:

3.2. Վիշապի սպանությունն այնքան խորն է կապված տիեզերական ծառի աման հետ, որ միջնադարյան մտորանկարչի ձեռքը, պատկերելով Մկրտության տեսարանը, քրիստոսի ոտքերի տակ, ջրի խորքում տեղադրում է պարտված վիշապին /քստ համապատասխան ստղմոսի/, իսկ զլխի վերևը՝ Սուրբ Ոգուն՝ աղավաղ կերպարանքով /հմտ. թռչունի թեմայի հետ՝ մարդակերպ տիեզերական ծառի զագաթին/:

3.3. Վիշապամարտի անհրաժեշտությունը տիեզերական ծառի ծագման համար պարտված վիշապին մոտեցնում է /և հերոսին խոր վերապում, հմտ. խորվիրապը/ առաջին զոհի հետ, որի մարմնից սկիզբ է առնում տիեզերքը /տիեզերական ծառը/: Դա ամենացայտուն ձևով դրսևվորվում է շիտրարական զոհում /Ա.Բայբուրին, 1983/, որն առասպելներում սովորաբար երիտասարդ աղջկա կերպարանք ունի /հմտ. № 3 հետ/: Ջոհի մարմնից ամուսն է տունը, տամբը, որոնք հենց տիեզերական ծառի հայտնի կերպարներից են:

3.3.1. Սակայն ուշագրավ է, որ շիտրարական զոհի համար նույնպես վերակառուցվում է առաջին երկվորյակների առասպելը. հմտ. առասպելական արյունապիղծ իվանի և Մարիայի ներկայությունը սլավո-

տական շինարարական ծեսում /Ա. տարբերակ/ և քրիստոսի ոսկե մուրճով
հեթանոսական մեհյանին զարկելը էջմիածնի մայր տաճարի կառուցման
ռապելում /Բ. տարբերակ/:

ՌԻՋԱԼԻԱ ԳԱՐԻԻՆԵԼՅԱՆ

ՀԱՅ-ԱՆԱՆԱԿԱՆ ՔԱՆԱՀՅՈՒՄԱՆԱՆ ԶՈՒԳԱՀԵՌՆԵՐԻ

ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ

Հայտնի է, որ գոյություն ունի էպիկական ավանդազրույցների
մեկտաքանման երկու մոտեցում՝ 1. առասպելական, 2. պատմական: Այս-
տեղ բանահյուսական նյութը կօգտագործվի որպես պատմական աղբյուր:

1. Օսական նարտյան էպոսի սյուժեների և Մովսես Խորենացու
,,Հայոց պատմության,, մեջ տեղ գտած էպիկական զրույցների միջև
անցկացված զուգահեռների շնորհիվ բացահայտվում են հայ-ալանական
հարաբերությունները լուսաբանող ուշագրավ բանահյուսական նյութեր:

2. Օսական ,,*Harma kagxuma*,, նարտյան դյուցազներգություն-
ը ձևավորվել է IX-X դդ.: էպոսի անվանման շուրջ բազմաթիվ վար-
կածներ կան: Մեր կարծիքով, *Nart*-ը հայերեն ,,*մարդ*,-ի այլափոխ-
ված ձևն է և երկուսի ակունքն էլ հնդեվրոպական *aner* արմատն է:
Եթե *Nart*-ը համեմատենք սկաններեն *mar*-ի կամ չեչեներեն *mar*-ի
հետ, ապա կտեսնենք, որ դրանք նույն՝ մարդ իմաստն ունեն: Դյու-
ցազներգության անվանման երկրորդ մասը՝ ,,*kagxuma*-ը,, հայերեն
,,*քաջ*,, բառն է /Հր. Աժառյան/:

3. Բանահյուսական զուգահեռներ կարելի է գտնել նարտյան էպո-
սի ,,*Ուիրիզմազի վերջին բալցի մասին*,, /բալցը ավարառության նպա-
տակով կատարվող աշխատանքն է/ և Մովսես Խորենացու հաղորդած Արտա-
շեսի ու ալանաց արքայադստեր՝ Սաթենիկի ամուսնության պատումում:
Դրանցում արտացոլվել են մ.թ. I-II դդ. ալանների Հայաստան կատարած
արշավանքների արձագանքները: Այդ լեգենդների միջև գոյություն ու-
նեցող զուգահեռներն է վկայում նաև Սաթենիկ և նարտյան Սատանա
անձնանունների համեմատական քննությունը:

4. Հաջորդ սյուժեն՝ ,,*ինչպես Բատրածը /Batrags/ փրկեց Ու-
իրիզմազին*,, նարտյան ասքը, զուգահեռներ ունի Մովսես Խորենացու
հաղորդած լեգենդի այն հատվածի հետ, ուր խոսվում է Արտաշեսի դեմ
Արգամի մահափորձի մասին, որից Արտաշեսին փրկում են իր ողորկները:
Հետագայում Արտաշեսի և Սաթենիկի որդի Արտավազդը ոչնչացնում է Ար-
գամի ողջ տոհմը: